

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՃԱՄՓԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան — Թիֆլիս գնացքը նոր պիտի շարժվի: Վագուս եմ քնելու երկրորդ դարակը բռնելու: Վագուսները լեփ-լեցուն չեն, բայց պակաս էլ չեն: Տեղերը բռնված են: Գուցե մեկը Լենինական կիջնի՞:

— Ո՞ր եք գնում, բարեկամ:

— Բաքու:

Երկրորդ կուպեն, երրորդը, մյուսները՝ Բաքու: Ի՞նչ, ամբողջ աշխարհը Բաքու է գնում:

— Սուսը Չանգեզուրից ենք, քիսամ ընք պանելու:

— Հա՛:

Նստում եմ լեռնցիների մեջ, որոնք ամբողջ վագուսը բռնել են:

Տարօրինակ բանվորներ: Դասավոր շորերը հագներին, որ զարհուրելի ուժով լվացքատաշտերի մեջ տորթել են լեռնցի հարսները, իրենք էլ նույն տաշտերի մեջ լավ քրիստոնեաբար լողացած՝ ահա խայտաճամուկ անկողիները փռել են ու վրաները նստել:

Բիբլիական խաղաղությամբ:

Լավ բանելու են գնում: Մեծով-պստկով, կին, երեխա, խայ տաճամուկ բոխչաները կապած:

Հարսները բախչի պես առողջ: Առողջությունից իրանց էլ ծիծաղները գալիս է: Երեխաները տանձ ու խնձորի նման: Թշեր ունեն, որ՝ պամիդոր: Իսկական բախչա:

Կարծես հարսանիք են գնում:

— Է՛, լավ: Գյուղում գործ չկա՞, որ գնում եք Բաքու:

Կա, ինչպե՞ս չէ: Դաշտային աշխատանքները նոր են վերաջացրել: Գնում են Բաքու՝ բանելու, ամառը կվերադառնան գյուղ: Ամառը «բուրժուալություն» ձմեռը «պրոլետարություն»:

— Հողերդ ո՞նց է:

— Փառք Աստծու:

Բերքը դժվար է գալիս: Գարի, ցորեն: Իհարկե անասնապահությունը լավագույնն է, բայց կառավարությունը հարկ է վերցնում:

Բացատրում եմ, որ կառավարությունն այդ հարկը վերադարձնում է իրենց, գյուղացիներին: Դպրոց, ճամփա, կոոպերատիվ, սերմացու և մի շարք և այլն:

— Հա՛, — ասում է ձայնի ծերով, բայց գլուխը մի քիչ լավ չի պառկում այդպիսի ոլորապտույտ շրջանառության և այն մետամորֆոզին, որին ենթարկվում է գյուղական հարկը: Ինչպես երևում է հարկի նշանակության ժողովրդականացումն առանձին տաղանդի և հոգածության գործ է:

Բայց ի՞նչ հսկա տիպեր են: Աչքս չեմ կարող պոկել վրաներից: Հանկարծ, որ ծիծաղը ճեղքում է արևակեղ դեմքի վրա շրթունքները՝ առողջ ատամները մարգարտի պես դուրս են թափվում: Հարսները կասես հեքիաթի նկարներ լինեն: Նրանցից մինն ահա. խաժակն, բոցեղեն մազեր, խնձոր-այտեր, «Քաջ Նազարի» Փերիշանը: Գրկին նստած է մի քոթոթ, մի իսկական սասունցի մանուկ Դավիթ: Անունն էլ. . . Ռամզես: Մյուս երեխաներն այնքան կայտառ են, սիրուն ու թմբիկ, որ չեմ նկատում թե ինչպես մոտենում եմ և թշերը մի լավ թուլ-թուլ եմ անում:

— Լավ խոխեք ըն,— ասում է տան մեծը,— աստված պահի:

Համաձայնում եմ: Վախում է թե աչքով տամ:

Ամբողջ ճամփին քրքջացել են: Մի անգամ լացերը չսեցի: Նախաճաշի ժամանակ է: Հսկա խուրջիններ են բացվում: Եվ հանկարծ՝ ինչ-որ անհրաժեշտություն: Ընդհանուր սուփրա փռելու տեղ չկա:

Ստիպված են ջոկ-ջոկ սուփրա բանալու:

Ահագին խորհրդակցություն, կարգադրություն — ինչպես անեն, որ միասին ուտեն:

Վերջը թե՛

— Դե, լավ, տուք՝ ըդտեղ, մուկ՝ ըստեղ:

Եվ ահա ծավալվում են լավաշները ծովերի պես, եփած հավերը լողում են դուրս:

Ահա մեկը հոտ է քաշում հավերից: Թարմ մթերքի սովոր լեռնցին քթի հարցերում շատ դելիկատ է: Երեկ է խաշած — թարմությանը չի համոզվում: Տալիս է մյուսներին:

Եվ ահա մեկ-մեկ, նվիրապետական կարգով՝ պապից մինչև թոռը՝ հոտ են քաշում և վերջապես վճռում են, որ հոտած չէ:

Հետո հանում են գաթաները:

Ինչ-որ ազիզ օրվա, ուխտագնացության հոտ է գալիս այս ամենից:

Ուտում են վիշապագուկների պես: Ավելի ճիշտը՝ պատ են շարում: Եվ հիմնավոր պատեր:

Զգիտեմ ինչու «օբեր»-ը խիստ է: Հետամուտ մաքրության՝ մի քանի անգամ անցավ նկատեց, որ հատակին ոսկոր, բան չթափեն:

Լեռնցին դիմեց ինձ:

— Էս խե՞ ա ըսենց:

Բացատրեցի, որ մաքրությունը պահանջվում է մաքրության համար և որ դրանում քաղաքական կամ ադմինիստրացիական կնճիռ չկա և որ անմաքրությունը վնաս է առողջության:

Կյանքումը չի հիվանդացել ո՛չ մաքրությունից և ո՛չ էլ անմաքրությունից:

Եվ ավելացնում եմ, որ տուգանքի հարց էլ կա մեջտեղ:

— Բո՛, բո՛. . .

Այս մեկը շուտ ըմբռնեցին: Հենց իմացան թե չէ՝ սկսեցին մաքրել նստարաններն ու հատակները: Ահագին բռունցքները քսում են հատակին, լավ թուփոփառն սրբում, փշրանքները հավաքում լցնում են փեշերն ու. . . պատուհանից դուրս — այն ժամանակ, երբ գնացքը կանգնած է. . . Մեկը գանգատվում է, որ իրենց խուրջիններում ահագին հացը մնացել է: Բաքու հո չի տանելու, գաթա են հրամցնում իրար — մերժում են: Իրենց խուրջինները լիքը գաթա է, ո՞վ պիտի ուտի:

— Այ տղա, մի սոված մարդ էլա չկա՝ գա ուտի:

Ականջը կանչի սովի տարիների. . .

Մի ուրիշ տիպ է նստած անկյունում: Նիհար, ջլուտ: Ղարաքիլիսեցի է: Լուրջ է և դանդալոշ՝ ինչպես «Զրասույզ գանգի» Նիկեյման՝: Աչքը շարունակ հեռուն զիզգագող ճամփաներին է:

Հանկարծ մեկ-մեկ վեր է թռչում:

— Էս դվո՞րն ա գնում:

Կարծես ճամփաների ճարտարապետ է, կամ Հայաստանի քարտեզ պիտի նկարե: Նայում է Նախիջևան գյուղի սարին:

— Էս Ալեք-պոլի՞ սարն է:

Բացատրում եմ: Շատ գոհ է մնում: Հետաքրքիր է քաղաքների, գյուղերի տեղագրության, բայց ճամփաների հանդեպ առանձին պահիտո՞ղ ունի: Չուր չէ, որ դարաքիլիսեցի է: Հին կառապանն է խոսում մեջը, «դրախտի» հոգեբանությունը:

Ինչ-որ հին-նախիջևանցիներ մտան ներս: Երկու երիտասարդներ: Նրանցից մինը կատվի աչքեր ունի: Հենց ներս մտան՝ սկսեցին ձեռն առնել զանգեզուրցիներին, դարաքիլիսեցուն, իրար:

— Բիձա,— ասում են դարաքիլիսեցուն,— Էս ի՞նչ սեխ է խուրջինումդ: Վագոնը մի ծանրացնի, բեր ուտենք:

Բիձան կտրում է սեխը, որ ուտեն:

— Բիձա՛, լավը որ չլինի, շտրաֆ կվերցնեն:

Կերան պրծան. —

— Ի՛նչ անհամն էր:

Սպեկուլյանտներ են: Գնում են Թիֆլիս՝ ապրանքի:

Ներս է մտնում մի աշուղ:

Ամբողջ վագոնն ուրախանում է: Աշուղը նստում է և կույր աչքերը առաստաղին հառած ժպտում:

— Ո՞րտեղացի ես:

— Ղարսեցի: Առաջարկում են, որ նվագի: Նա էլ այդ կարծիքի է, բայց վախում է կոնսորից: Թեպետ. . . գործը նվագելն է էլի: Սկսում է ահա

— Ջա՛ն, Ակոփ, ջա՛ն,— ձայն է տալիս ինչ-որ լենինականցի, որ մինչև այդ լուռ էր:

Բայց հենց երգի ու նվագի քաղցր ժամանակը՝ հանկարծ.

— Սո՛ւս, կանտրո՛լը. . .

Ձայները լռեցին: Ակոփը բռնվեց: Տոմսակ են ուզում: Չունի: «Օբերը» գոռում է վրան:

— Որտեղի՞ց մտար. մուռտառ:

— Տարե՛ք սրան,— ասում է ռեիզորը ռուսերեն:

Ակոփին տանում են կոնդուկտորների կուպեն:

Վագոնում մի դժգոհություն է սկսվում:

— Ի՛նչ լավ էր ածում, ափսո՛ս:

— Սուս կաց, Է՛: Վրացի չէ՞: Պիտի վրացությունը ցույց տա ախր. . .

Խոսքը ռեիզորի մասին է:

Հենց ռեիզորը հեռացավ թե չէ՝ գնացին Ակոփին նորից բերին:

— Ջանըմ, դու ածա, գործիդ նայի:

Ակոփն էլ այդ կարծիքի է: Եվ շարունակում է երգը.

Ոչխարի պես ինձ քերթեցիր:

Սաղ-սաղ գերեզմանս դու ես:

«Օբերի» քեֆը գաղտնի լավ է: Անցնում է Ակոփի կողքով.

— Ածա՛, Ակոփ, ածա՛, բայքի շտրաֆի փողը հանես: Ակոփը գիտե իր բանը:

Փողերը հավաքում է ու «քաշվում»: Ո՞վ է իմանում, սատանի բան է, մեկ էլ տեսար. . . բայց մի քանի րոպեից հետո ձայնը գալիս է արդեն «կոնդուկտորների կուպեից»: Արվեստը օրենքի կողքից անցել է:

Հիսուսի պես որ չարչարվեմ:

Դարձյալ կասեմ, որ իմ յարն ես:

Մեր կուպեն լցվում է «կոնդուկտորների կուպեի» դռան: Կոնդուկտորները խոհեմություն են համարում լռեցնել գայթակղչին:

Բայց ամբողջ ճամփին մինչև Լենինական այս ու այն կուպեից լսվում է Ակոփի նվագը: Նվագում ու երգում է ամեն բան:

Նաև՝ «смело товарищи в ногу»²:

Եվ մյուս կուպեն խմբովին մասնակցում է Ակոփին:

Մարդիկ ուրախ են: Հացը կա, ապահովությունը կա, ուժեղ են, առողջ: Եվ երգ են ուզում: Եվ ահա սահմանամերձ ամբողջ գիծն անցնում ենք, բոլորը կատակում են, երգում, ուտում. . .

Հարսանիք:

Բայց երբեմն էլ հարսանիքն ընդհատվում է դրամատիկական էպիզոդներով:

Ահա կորիդորից «օբերը» ներս է բերում մի շիրակեցու: Կորիդորում արգելված է կանգնել: Շիրակեցին վրդովված է մինչև հոգու խորքերը:

— Ինչ որ կվերաբերի՝ օրենքով չպիտի՞ եղնի: Ահան, կալիդորը չկայնեցա՛՝ Էկա վագոնը տուրմի (турма) պես նստա, Էդ եղավ պառա՞դ. . .

— Հայ չե՞, ջանը՛մ,— սիրտ է տալիս անկյունում նստած լենինականցին,— սարթությունը պիտի ցույց տա, Է. . .

Տրտունջը չի օգնում: «Հայ» «օբերը» խիստ հսկում է մաքրության ու կարգին: Մենակ Ակոփն է, որ տխուր հեշտությամբ ընդունում է իր «շտրաֆի» անխուսափելիությունը: Բայց դա նրա պրոֆեսիան ու պրակտիկան է: Նա «շտրաֆով» է ապրում:

— Ակոփ, շտրաֆը պիտի տա՞ս:

— Հըպը ի՞նչ: Հայի պոյեզդ Է՛՝ հըմը շտրաֆ կառնեն:

Սակայն Չանգեզուրի վիշապները գոհ են այդ կարգ ու կանոնից:— Խոսում եմ այդ մասին: Լեռնցին շուտ է հասկանում կատեգորիկ հրամանը և սիրում: Մի քանի անգամ գնալ-գալով այդ գծովը նկատել եմ, որ ճամփորդներն իրենք էլ հսկում են մաքրության և կարգապահության:

Լենինականի կայարանում կատարյալ հարձակման ենթարկվեցինք: Արդեն այսքան մարդ չի կարող թիֆլիս գնացող լինել և ոչ էլ վագոն կա այդքանի համար: Մեկը պիտի գնա՝ բայց տասը հոգի եկել են ճամփու դնելու:

— Տե՛ղ բռնեք թե՛զ. . .

Բայց էլ տեղ չկա: Ետ են մղում մնացածներին, որոնք անսկուն հավատով էլի ներս են մղվում.

— Հայ չե՛ք, ծո՛, մե տե՛ղում տվեք:

Չանգեզուրցի հարսներից մինը պայթեց.

— Խի՞, բա որ թորք ըլի տեղ չենք տալո՞ւ:

Ասո՞ւմ են՝ տեղ չկա:

«Հայկական» գնացքը շարժվում է՝ ահա այսպես լուծելով կարգ ու կանոնի, մաքրության, արվեստի և «հայ-թուրք-վրացական» հարցերը. . .

ՃԱՄՓԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Էջ 21)

Առաջին անգամ տպագրվել է ԽՀ, 1924, № 254: Ինքնագիրը չի պահպանվել Տպագրվում է նույնից:

1 Գ. Հաուպտմանի «Ջրասույզ գանգ» պիեսում գործող անձ:

2 Հեղափոխական երգ, որի հեղինակն է ռուս բանաստեղծ Լ. Պ. Ռադինը (1860—1901 թթ.): Հայերեն առաջին թարգմանությունը կատարել է Հ. Հակոբյանը 1905 թ.: